Արձանագրություն թիվ 2

ՀՀ ՇՄ Արթիկ համայնքում 30. 09. 2021 թ. կայացած հանրային քննարկման

30.09.2021թ ***ք. Արթիկ***

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2021 թվականի սեպտեմբերի 30-ին ժամը 11:00-ին ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի համայնքապետարանում տեղի ունեցավ «Կլորիկ» ՍՊԸ կողմից նախատեսված Արթիկի տուֆի հանքավայրերի արևելյան՝ 08-002-0251 կադաստրային թաղամասում շահագործման աշխատանքների գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների 3-րդ փուլը:

Հանրային քննարկմանը մասնակցում էին Արթիկի համայնքի ղեկավարի խորհրդական Գ. Փթուկյանը, <<Կլորիկ>> ՍՊԸ-ի տնօրեն Տ. Պետրոսյանը, Արթիկ համայնքի ավագանու անդամ՝ Ա. Նիկողոսյանը, Արթիկի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի մասնագետներ, համայնքի բնակիչներ:

Նիստը վարում էր Արթիկ համայնքի ղեկավարի խորհրդական Գ. Փթուկյանը: Նա մասնակիցներին ներկայացրեց հանդիպման օրակարգը. <<Կլորիկ>> ՍՊԸ-ի տնօրենն Արթիկ համայնքի վարչական սահմանում գտնվող հրաբխային տուֆի հանքավայրերի արևելյան թաղամասում գտնվող հանքերում ցանկանում է կազմակերպել տուֆ քարի արդյունահանում: Նա նշեց, որ վերոնշյալ հանքավայրերը նախկինում շահագործվել են <<Արթիկ Տուֆ>> ընկերության կողմից, սակայն ընկերության սնանկացումից հետո դրանցում դադարել է քարի արդյունահանումը: Այդ տարածքներն այժմ կրկին համայնքինն են, և նախատեսվող գործունեության համար <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով այսօր անցկացվում են հանրային քննարկումների 3-րդ փուլը: Նա խնդրեց մասնակիցներին ակտիվ լինել և բարձրացնել հուզող բոլոր հարցերը:

Ելույթ ունեցան.

1. Համայնքի ավագանի Ա. Նիկողոսյանն ասաց, որ համայնքում մնացել են միայն երկու շահագործվող հանքեր, քարի պահանջարկը լրացվում է Պեմզաշեն համայնքի հանքավայրերից արդյունահանվող քարով: Եթե քարի

արդյունահանությունը ոչ մի վնաս չի տալիս շրջակա միջավայրին, շահագործման ընթացքում էլ կպահպանվեն սանիտարականխարգելիչ անհրաժեշտ միջոցառումները, ապա ինչ պատճառ կա չթույլատրելու քարնաի արդյունահանումըդառ: Հանքավայրերի շահագործումը համայնքի համար դրական կանդրադառնա:

2. Գ. Փթուկյանը հիշեցրեց, որ վերոնշյալ տարածքը մոտ է գտնվում ՀՀՇՄ նախարարության ԲԾԻԳ-ի կողմից <<Արթիկ քաղաքաի փակ քարհանքերի և ջրհեղեղների կառավարում>> պիլոտային ծրագրով իրականացվող 40 հա ռեկուլտիվացիոն տարածքին:
3. <<Կլորիկ>> ՍՊԸ-ի տնօրեն Տ. Պետրոսյանը պատասխանեց, որ իր ընկերությունն արդեն իսկ ձեռք է բերել ջրցան մեքենան՝ փոշու արտանետումները քարի արդյունահանման ընթացքում քչացնելու համար: Բացի այդ, հաշվի առնելով հանգստյան գոտու հարևանությունը հանքավայրի տարածքից՝ օրենքով նախատեսված 50 մետր սանիտարապաշտպանիչ գոտու փոխարեն ընկերությունը կպահմանի 100 մետր հեռավորության: Նաև սանիտարապաշտպան գոտու եզրագծով երկշերտ ծառատունկ է նախատեսված:
4. Գ. Փթուկյանը ներկաներին խնդրեց հարցերի միջոցով ակտիվ մասնակցել քննարկմաը:

Մասնակիցների կողմից հարցեր չհնչեցվեցին.

Գ. Փթուկյանը, ամփոփելով հանրային քննարկումների արդյունքները, շնորհակալություն հայտնեց մասնակիցներին ներկա գտնվելու համար, իսկ ծրագրի նախաձեռնող կազմակերպությանը՝ հետագա հաջողություններ:

Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ
հանրային քննարկման պատասխանատու
աշխատակազմի քարտուղար՝ Գ. Փթուկյան

<<Կլորիկ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Տ. Պետրոսյան

Արձանագրեց՝ Արթիկի համայնքապետարանի
Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության
և հանրային կապերի բաժնի
առաջատար մասնագետ՝ Տ. Զարչյան

Հանրային քննարկումներին մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

«Կլորիկ» ՍՊԸ կողմից նախատեսված ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տուֆի հանքավայրերի արևելյան՝ 08-002-0251 կադաստրային թաղամասում շահագործման աշխատանքների գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների 3-րդ փուլի մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

30.09.2021 թ. Ժամը 11:00-ին

Արթիկի համայնքապետարան

Հ/Հ	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Զբաղվածությունը	Ստորագրությունը
1	[illegible]	095-32-90-61	[illegible]	[signature]
2	[illegible]	093 74 38 39	[illegible]	[signature]
3	[illegible]	077 038 034	[illegible]	[signature]
4	[illegible]	093 200 750	[illegible]	[signature]
5	[illegible]	077 76-83-24	[illegible]	[signature]
6	[illegible]	093-138-018	[illegible]	[signature]
7	[illegible]	094-010-666	[illegible]	[signature]
8	[illegible]	093-21-1913	[illegible]	[signature]
9	[illegible]	098-14-84-02	[illegible]	[signature]
10	[illegible]	077 462616	[illegible]	[signature]
11	[illegible]	094-72-30-70	[illegible]	[signature]
12	[illegible]	077852021	[illegible]	[signature]
13				
14				
15				
16				
17				
18				
19				
20				
21				
22				